Գաւառներ	Ընդհ. բնակչ.	Հայ. %	Մահմ. %	Այլք %
1. Էջմիածնի գ.	132	95 — 72	36 — 27	1 — 1
2. Երեւանի գ.	238	154 — 65	73 — 31	11 — 4
3. Նոր-Բարազ. գ.	146	100 — 68	45 — 32	1 — 1
4. Շարուրի գ. (եւ Դարալագ.)	98	18 — 19	70 — 91	— — —
5. Նախիջեւանի գ.	143	58 — 41	84 — 58	1 — 1
6. Սուրմալուի գ.	109	34 — 31	63 — 58	12 — 11
Ընդամէնը	866	459 — 54	371 — 43	26 — 3

Այս աղիւսակից տեսնում ենք ուրեմն՝ նախագծուած նահանգում, որ ունենալու էր ընդամէնը 866 հազար բնակիչ, հայ տարրի թիւը լինելու էր 459 հազար եւ կամ 54 տոկոս ողջ բնակչութեան, իսկ մահմետականներինը (թուրք-թաթար, քիւրդ եւայլն) — 371 հազար եւ կամ 43%: Մնացեալը՝ ուրիշ տարրեր: Ուրիշ խօսքով, հայութիւնը կազմելու էր թէեւ մեծամասնութիւն, բայց ոչ շատ ուժեղ (54 առ հարիւր): Մահմետականութիւնը լինելու էր զօրեղ փոքրամասնութիւնը (43 առ հարիւր):

Ծրագրուած վեց գաւառներից էլ հայերը մեծամասնութիւն էին կազմելու երեքում միայն (լեռնային գօտի), իսկ մնացած երեքում — մահմետականները (դաշտային գօտի):

Նախագծուած Շիրակի նահանգի (Ալեքսանդրապոլի) մէջ պիտի մտնէին հետեւեալ գաւառները — Ալեքսանդրապոլի, Ախալքալաքի, Լոռիի, Կարսի եւ Կաղզուանի: Հայկական այս երկրորդ նահանգն էլ ունենալու էր հետեւեալ պատկերը. (1000-ական բնակիչներ):

Գաւառներ	Ընդհ. բնակչ.	Հայ. %	Մահմ. %	Այլք %
1. Ալէք-պոլի գ.	204	160 — 83	22 — 11	12 — 6
2. Ախալքալ. գ.	120	94 — 79	10 — 8	16 — 13
3. Լոռիի գ.	120	92 — 77	14 — 12	14 — 11
4. Կարսի գ.	193	83 — 43	49 — 25	61 — 32
5. Կաղզուանի գ.	82	35 — 43	26 — 32	21 — 23
Ընդամէնը	719	474 — 66	121 — 17	124 — 17

Այս աղիւսակից էլ տեսնում ենք, որ նախագծուած Շիրակի նահանգը ունենալու էր ընդամէնը 719 հազար բնակիչ, որից հայ՝ 474 հազար (66 տոկոս), մահմետական՝ 121 հազար (17 տոկոս), այլ ազգութիւններ՝ 124 հազար (17 տոկոս): Ուրիշ խօսքով՝ հայութիւնը այդ նահանգում տոկոսային չափով աւելի ուժեղ պիտի ներկայացուած լինէր, քան Երեւանի նահանգում: Նախագծուած գաւառների ցանկից երեւում է, որ հայութիւնը ներկայացնելու էր բացարձակ եւ զգալի մեծամասնութիւն (77-83%) երեքում, իսկ երկուսում էլ՝ համեմատական մեծամասնութիւն (43%):

Ի՞նչ էր լինելու նախագծուած երրորդ՝ Գանձակի նահանգի պատկերը, որ իր մէջ առնելու էր հետեւեալ չորս գաւառները — Իջեւանի (Քարվանսարա), Գանձակի (Լեռնային), Շուշիի եւ Զանգեզուրի:

Ահա այն. (բնակչութեան թիւը հաշուած է 1000-ներով):

Այս նոր նահանգում էլ, ուրեմն, որ պիտի հաշուէր ընդամէնը 529 հազար բնակիչ, հայ տարրի թիւը կազմելու էր 365 հազար եւ կամ 70%, մահմետականներինը՝ 134 հազար կամ 25%: Այստեղ եւս հայութիւնը կազմելու էր զգալի մեծամասնութիւն,— ինչպէս